**Արձանագրություն №3**
**№179/GArm/26_5.4_073/21.05.26 ծածկագրով**
**Մրցակցային ընտրության հանձնաժողովի**

**ք.Երևան** **01 հունիսի 2026թ.**
**ժամը 11:15**

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Լալայան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Մակարյան, Հ.Յումուշաղցյան, Տ.Հայրապետյան, Կ.Մինասյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Հարությունյան

## 1. Մասնակիցների որակավորման գնահատման նիստ

«Էլիտ Գազ Գրուպ» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել, ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով պահանջված փաստաթղթերին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 , դեմ - 0:

Հանձնաժողովը որոշեց գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին.

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 , դեմ - 0:

Հիմք ընդունելով գնահատման թերթիկը հանձնաժողովը որոշեց անմիջապես հաստատել գնահատման արդյունքները.

«Էլիտ Գազ Գրուպ» ՍՊԸ – բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 , դեմ - 0:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից իրականացվող գնումների մասին կարգի համաձայն, հանձնաժողովը որոշեց մրցակցային ընտրության ընտրված մասնակից ճանաչել «Էլիտ Գազ Գրուպ» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված մրցակցային ընտրության հայտ և տնտեսապես շահավետ գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 , դեմ - 0:

## 2. Մրցակցային ընտրության արդյունքների մասին

Հանձնաժողովը որոշեց.

Պատվիրատու՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի, որը գտնվում է ք.Երևան Թբիլիսյան 43 հասցեում և կապալառու «Էլիտ Գազ Գրուպ» ՍՊԸ-ի, որը գտնվում է ՀՀ, Շիրակի մարզ, ք. Արթիկ, Գայի 7 հասցեում, միջև կնքել աշխատանքների կատարման պայմանագիր: Պայմանագրի գինը կազմում է **53130630** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 , դեմ - 0:

| | | |
| --- | --- | --- |
| **Հանձնաժողովի.** | | |
| **Նախագահ՝** | | Ա. Լալայան |
| **Անդամներ՝** | | Վ.Մակարյան |
| | | Հ.Յումուշաղցյան |
| | | Տ.Հայրապետյան |
| | | Կ.Մինասյան |
| **Քարտուղար՝** | | Ա.Հարությունյան |

## №179/GArm/26_5.4_073/21.05.26 ծածկագրով մրցակցային ընտրության հայտի գնահատման թերթիկ 01.06.2026թ.

| | Մասնակցի հայտի գնահատման չափանիշները | Գնահատականը | Մասնակցի հայտի գնահատման արդյունքները*<br>«Էլիտ Գազ Գրուպ» ՍՊԸ |
|---|---|---|---|
| 1 | Հայտ պարունակող ծրարը կազմելու և ներկայացվելու համապատասխանությունը սահմանված կարգին | Անբավարար<br>Բավարար | Բավարար |
| 2 | Բացված ծրարում հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին | Անբավարար<br>Բավարար | Բավարար |
| 3 | Առաջարկված գնման առարկայի տեխնիկական հատկանիշների համապատասխանությունը հրավերով սահմանված նվազագույն պահանջներին | Անբավարար<br>Բավարար | Բավարար |
| 4 | Ներկայացված ֆինանսական ցուցանիշների՝ գնային առաջարկի և ինքնարժեքի հաշվարկման ճշտությունը, հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը ու դրանց, ինչպես նաև ինքնարժեքի հաշվարկման թվաբանական ճշտությունը, առաջարկված գումարը չի գերազանցում նախնական առավելագույն արժեքը | Անբավարար<br>Բավարար | Բավարար |
| 5 | Ունի մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ | Անբավարար<br>Բավարար | Բավարար |
| 6 | Նախորդ ժամանակահատվածում՝ տվյալ տարվա և դրան նախորդող 3 տարիների ընթացքում կատարված նմանատիպ աշխատանքների ընդհանուր ծավալը | Անբավարար<br>Բավարար | Բավարար |
| 7 | Ֆինանսական և տեխնիկական միջոցների առկայություն | Անբավարար<br>Բավարար | Բավարար |
| | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ** | Անբավարար<br>Բավարար | Բավարար |

*Չափանիշներից որևէ մեկով «Անբավարար» գնահատական ստանալու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է.

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի. | | |
| Նախագահ՝ | | Ա. Լալայան |
| Անդամներ՝ | | Վ.Մակարյան |
| | | Հ.Յումուշաղցյան |
| | | Տ.Հայրապետյան |
| | | Կ.Մինասյան |